

- (79-80) Երկրի տարածքը կազմում է 24 000 կմ<sup>2</sup>, երկաթուղիների երկարությունը՝ 7200 կմ, բեռնափոխադրումների ծավալը՝ 40000 տ, բեռնափոխադրման միջին հեռավորությունը՝ 150կմ:

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՏՆՈՒԹՅՈՒՆ  
2011

79 Որոշել երկաթուղային ցանցի խտությունը;

## ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### ԹԵՍ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

80 Որոշել բեռնաշրջանառությունը:

### Դարգելի՞ դիմորդ

Առաջադրանքները կատարելիս յուրաքանչյուրից պետք է ընտրել այն տարբերակը, որը Ձեր կարծիքով ճիշտ պատասխանն է, և պատասխանների ձևաթղթի համապատասխան մասում կատարել նշում:

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **ԹԵՍՏ-ԳՐՔՈՒՅԿԸ ՀԻ ՍՊՈՒԳՎՈՒՄ: ՍՊՈՒԳՎՈՒՄ Է ՄԻԱՅՆ ՊԱՏՈԱՍԽԱՆՄԵՐԻ ԺԱՄԱԹՈՒՂԹԸ:**


Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորի ճշտությունը:

Ցանկանում ենք հաջողություն:

## Ա ՄԱԿԱՐԴԱԿ

1 Նկարում ո՞ր տառով է տրված հարավային բևեռային շրջագիծը:

- 1) Ռ
- 2) Գ
- 3) Ա
- 4) Բ



2 Երկու քաղաքների միջև եղած իրական հեռավորությունը 600 կմ է: Որքան կլիմայի նրանց միջև հեռավորությունը 1:1500000 մասշտաբի քարտեզի վրա:

- 1) 40 սմ
- 2) 20 սմ
- 3) 10 սմ
- 4) 60 սմ

3 Երկրագնդի միջին շառավիղը կազմում է.

- 1) 6358 կմ
- 2) 6378 կմ
- 3) 6391 կմ
- 4) 6371 կմ

4 Ընտրել ճիշտ պատասխանը.


- 1) Ամբողջ Երկրագնդի, նրա մայրցամաքների կամ Երկրների ընդհանրացված պատկերը թղթի վրա կոչվում է հատակագիծ:
- 2) Գծային մասշտաբը արտահայտվում է կոտորակի տեսքով:
- 3) Երկրի որևէ կետի հեռավորությունը հասարակածից՝ արտահայտած աստիճաններով կոչվում է աշխարհագրական լայնություն:
- 4) Երկիրն Արեգակից ամենամեծ հեռավորության վրա գտնվող մոլորակն է:

5 Այն հարթավայրը, որը գտնվում է մինչև 200-500 մ բացարձակ բարձրության վրա, կոչվում է.

- 1) սարահարթ
- 2) ցածրավայր
- 3) դաշտավայր
- 4) բարձրավայր

75 Քարտեզի վրա որ տարին են համապատասխանում բնակչության առավել բարձր բնական աճ ունեցող երկրները.

- 1) Դ
- 2) Բ
- 3) Ա
- 4) Գ




76 Օդի բացարձակ խոնավությունը 12գ/ խոր.մ: Օդը հագեցնելու համար անհրաժեշտ է 15գ ջրային գոլորշի: Որոշել օդի հարաբերական խոնավությունը:

77 Որոշել գետի անկումը:

78 Որոշել գետի թեքությունը:

Կլիմայական որ գոտում են գտնվում 3Ա, 3Բ և 3Գ թվերով նշված տարածքները:

- 1) արկտիկական
- 2) արևադարձային
- 3) մերձարևադարձային
- 4) մերձհասարակածային



Ցանաքի բնական գոգավորությունը, որը լցված է ջրով և անմիջական կապ չունի ծովի հետ կոչվում է.

- 1) լիճ
- 2) ջրանցք
- 3) ջրանբար
- 4) սառցադաշտ

Կլիմայական քարտեզի վրա հավասար ճնշում ունեցող վայրերը միացնող գիծը կոչվում է.


- 1) իզոբաթ
- 2) իզոբար
- 3) հորիզոնական
- 4) իզոթերմ

Եռան ստորոտին օդի ջերմաստիճանը  $16^{\circ}\text{C}$  է, իսկ գագաթին՝  $4^{\circ}\text{C}$ : Եռան հարաբերական բարձրությունը կլինի. (հաշվարկը կատարել  $6^{\circ}$ -ով).

- 1) 3000մ
- 2) 1000մ
- 3) 4000մ
- 4) 2000մ


Նկարում պարկերված է:

- 1) գրաբեն
- 2) հորսոտ
- 3) բլուր
- 4) ցածրավայր



Նկարում պատկերված է

- 1) բրիզ
- 2) ցիկլոն
- 3) մուսսոն
- 4) պասսատ



Աֆրիկայի արևելքում գտնվող կղզին է.

- 1) Սախալինը
- 2) Սումատրան
- 3) Նոր Գվինեան
- 4) Մադագասկարը

**12 Հյուսիսային Ամերիկայի լեռներն են.**

- 1) Ալպերը և Անդերը
- 2) Մեծ Զրբաժանը և Ատլասը
- 3) Կոորդիլիերաները և Մեծ Կովկասը
- 4) Ժայռոտը և Ապալաչները

**13 Այդ բնական զոնան ունի լավ արտահայտված երկու սեզոն՝ խոնավ, տաք ամառներ, տաք և չոր ձմեռներ: Լայն տարածում ունեն Աֆրիկայում և Հարավային Ամերիկայում: Այդ բնական զոնան է.**

- 1) Տափաստանը
- 2) Սավանան
- 3) Տունդրան
- 4) Անապատը

**14 Ընտրել ճիշտ պատասխանը.**

- 1) Աֆրիկայի ամենաջրառատ գետը Նեղոսն է:
- 2) Ավստրալիայի արևատյան մասում հյուսիսից-հարավ ձգվում է Մեծ Զրբաժան լեռնաշղթան:
- 3) Հուանհե և Յանցզի գետերը պատկանում են Յնդկական օվկիանոսի ավազանին:
- 4) Կամերուն հրաբուխը գտնվում է Աֆրիկայում:

**15 Ո՞ր պնդումն է սխալ.**

- 1) Հարավային Ամերիկայի ամենաբարձր լեռը Կիլիմանջարոն է:
- 2) Հարավային Ամերիկայի տարածքի արևելյան մասը գտնվում է պլատֆորմի վրա::
- 3) Անդերի բարձր լեռնագագաթները անցնում են 6000մ-ից::
- 4) Հարավային Ամերիկայում է գտնվում աշխարհի ամենաբարձր ջրվեժը՝ Անխելը (1054մ)

**16 «Թերակղզի – մայրցամաք» սկզբունքով կազմված զույգերից ընտրել ճիշտը.**

- 1) Թայմիր - Աֆրիկա
- 2) Արաբական - Եվրասիա
- 3) Ֆլորիդա - Հարավային Ամերիկա
- 4) Ապենինյան – Հյուսիսային Ամերիկա

**17 «Անապատ – մայրցամաք» սկզբունքով կազմված զույգերից ընտրել ճիշտը.**

- 1) Նամիբ - Ավստրալիա
- 2) Կարակուն – Հյուսիսային Ամերիկա
- 3) Գորի - Եվրասիա
- 4) Թար - Հարավային Ամերիկա

**67 Ընտրել ճիշտ պատասխանը.**

- 1) ՀՀ քիմիական արդյունաբերության զարգացմանը նպաստել է ուղբանիզացման բարձր մակարդակը:
- 2) ՀՀ էներգետիկայի զարգացմանը նպաստել է վառելիքային ռեսուրսների առկայությունը:
- 3) ՀՀ սննդի արդյունաբերության զարգացմանը նպաստել է անտառային ռեսուրսների առկայությունը:
- 4) ՀՀ մեքենաշինության զարգացմանը նպաստել է աշխատանքային ռեսուրսների առկայությունը:

**68 Ընտրել լանդշաֆտային գոտիների ճիշտ շարքը՝ ըստ նրանց բացարձակ բարձրությունների աճման.**

- 1) ալպյան, չոր լեռնատափաստանային, լեռնանտառային, կիսանապատային:
- 2) չոր լեռնատափաստանային, կիսանապատային, ալպյան, լեռնանտառային:
- 3) կիսանապատային, չոր լեռնատափաստանային, լեռնանտառային, ալպյան:
- 4) կիսանապատային, ալպյան, չոր լեռնատափաստանային, լեռնանտառային:

**69 Ինչն է ընդիհանուր Շիրակի և Արարատի մարգերի համար.**

- 1) Հարուստ են տուֆի պաշարներով:
- 2) ՀՀ ամենանոսր բնակեցված մարգերն են:
- 3) Մեծ տարածում ունեն լեռնանտառային լանդշաֆտները::
- 4) Սահմանակից են Թուրքիային:

**70 Աղտոտված օդային ավազան ունեցող քաղաքներն են.**

- 1) Գավառը և Սևանը
- 2) Դրազդանը և Ալավերդին
- 3) Դիլիջանը և Գորիսը
- 4) Սիսիանը և Ջերմուկը

**71 Անտառային ռեսուրսներով ապահովված երկրներն են.**

- 1) Իրանը և Իրաքը
- 2) Շվեդիան և Կանադան
- 3) Յնդկաստանը և Արգենտինան
- 4) Չինաստանը և Ուզբեկստանը

**72 Ընտրել ճիշտ պատասխանը.**

«Զերմոցային էֆեկտը» պայմանավորված է.

- 1) սառցադաշտերի հալմանք
- 2) արեգակնային ճառագայթների կտրուկ նվազմանք
- 3) մթնոլորտում ջրային գոլորշու և ածխաթթու գազի քանակի ավելացմանք
- 4) մթնոլորտի շրջանառությանք

**73 Բուսական ռեսուրսների պահպանությանն ուղղված միջոցառում չէ.**

- 1) «Կարմիր գրքի» ստեղծումը
- 2) Ցանքաշրջանառության կազմակերպումը
- 3) Հատուկ պահպանվող տարածքների ստեղծումը
- 4) Արեստական անտառների ստեղծումը

61 Կղեխմբային (արշիպելագային) պետություն Ասիայում: Աշխարհում ամենամեծ մահմեդական երկիրն է: Այդ պետությունն է.

- 1) Ֆիլիպինները
- 2) Ինդոնեզիան
- 3) Սալայգիան
- 4) Ճապոնիան

62 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) Զարգացած երկրների բնակչության սեռային կազմում գերակշռում են տղամարդիկ:
- 2) Ռասաները մինյանցից տարբերվում են մարդկանց մշակույթով, լեզվով և կրոնով:
- 3) Բնակչության ծերացման գործընթացն առավել բնորոշ է զարգացող երկրներին:
- 4) Գյուղական տարաբնակեցման ցրված ձևերը տարածված են ԱՄՆ, Կանադայում և Ավստրալիայում:

63 Ընտրել սխալ պատասխանը Ռուսաստանի համար.

- 1) Տարածքի մեջ մասը գտնվում է բարեխառն կլիմայական գոտում:
- 2) Բնակչության թվով աշխարհում երրորդն է:
- 3) Նավթի և գազի արդյունահանմանը աշխարհի առաջատար երկրներից է:
- 4) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը անասնապահությունն է::

64 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) Տարվա տաք կեսին Հայաստանի տարածք են ներխուժում արկտիկական օդային զանգվածները:
- 2) ՀՀ գետերի մեջ մասը պատկանում են Կուրի ավազանին:
- 3) ՀՀ տարածքի մեջ մասը զբաղեցնում են չոր տափաստանային լանդշաֆտները:
- 4) ՀՀ-ն հարևան տարածքների նկատմամբ ունի ավելի մեծ միջին բարձրություն:

65 «Գետ-ջրամբար» ջրամբար սկզբունքով կազմված զույգերից ընտրել ճիշտը.

- 1) Որոտան – Կեչուտի
- 2) Քասախ- Ապարանի
- 3) Հրազդան- Շամբի
- 4) Արփա- Ախուրյանի

66 Ընտրել հանքավայրի և հանքատեսակների անվանումների տրված համապատասխանության ճիշտ շարքը.

- |            |                  |
|------------|------------------|
| 1. Սոթք    | ա. պղինձ         |
| 2. Կապան   | բ. աղնձամոլիբդեն |
| 3. Ագարակ  | գ. երկաք         |
| 4. Սվարանց | դ. ոսկի          |

- 1) 1-ա, 2-գ, 3-բ, 4-դ
- 2) 1-դ, 2-ա, 3-բ, 4-գ
- 3) 1-դ, 2-բ, 3-գ, 4-ա
- 4) 1-բ, 2-գ, 3-ա, 4-դ

18 Ատլանտյան օվկիանոսում գտնվող կղզիներ են.

- 1) Իսլանդիան և Իռլանդիան
- 2) Սադագասկարը և Կուրան
- 3) Նոր Զելանդիան և Նոր Երկիր
- 4) Սումատրան և Սիցիլիան

19 Քարտեզի վրա Բրազիլիական սարահարթը որ տառով է նշված.

- 1) Ա
- 2) Գ
- 3) Բ
- 4) Դ



20 Քարտեզի վրա Չիլի պետությունը որ տառով է նշված.

- 1) Ը
- 2) Զ
- 3) Է
- 4) Ե

21 Պետական կառավարման այն ձևը, երբ գերագույն իշխանությունը փոխանցվում է ժառանգական իրավունքով, կոչվում է.

- 1) հանրապետություն
- 2) դոմինիոն
- 3) դաշնություն
- 4) միապետություն

22 Որևէ ժամանակահատվածում բնակչության ծննդիության և մահացության տարբերությունը կոչվում է.

- 1) բնակչության բնական աճ
- 2) բնակչության մեխանիկական աճ
- 3) բնակչության վերարտադրություն
- 4) ժողովրդագրական ճգնաժամ

23 Դա գունավոր մետաղածուլության ճյուղ է; Այն հումքատար է, ուստի կողմնորոշվում է դեպի հանքավայրերը: Այդ ճյուղն է.

- 1) այսումինի ձուլում
- 2) թուժի ձուլում
- 3) պղնձի ձուլում
- 4) ռուկու ձուլում

24 Երկրի տարածքը կազմում է 40000 կմ<sup>2</sup>, բնակչության թիվը՝ 6 մլն: Բնակչության միջին խտությունը կլինի.

- 1) 120 մարդ/կմ<sup>2</sup>
- 2) 80մարդ/կմ<sup>2</sup>
- 3) 150 մարդ/կմ<sup>2</sup>
- 4) 200 մարդ/կմ<sup>2</sup>

25 «Ժողովուրդ-Լեզվախումբ» սկզբունքով կազմված զույգերից ընտրել սխալը.

- 1) բելառուսներ – սլավոնական
- 2) իտալացիներ – ռոմանական
- 3) անգլիացիներ - գերմանական
- 4) վրացիներ – թուրքական

26 «Հանքային ռեսուրս - առաջատար երկիր» սկզբունքով կազմված զույգերից ընտրել ճիշտը.

- 1) գազ – Ռուսաստան
- 2) նավթ – Իտալիա
- 3) երկար- Գերմանիա
- 4) ածուխ – Ֆրանսիա

27 «Պետություն-մայրաքաղաք» սկզբունքով կազմված զույգերից ընտրել սխալը.

- 1) Չինաստան – Պեկին
- 2) Մեքսիկա -Մեխիկո
- 3) Բրազիլիա - Ռիո դե Ժանայրո
- 4) Թուրքիա - Անկարա

28 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) Գերմանիայի արդյունաբերության առաջատար ճյուղը թեթև արդյունաբերությունն է:
- 2) Գերմանիայի գյուղատնտեսության առաջատար ճյուղը ոչխարաբուծությունն է:
- 3) Գերմանիայի ուրբանիզացման մակարդակը ցածր է:
- 4) Գերմանիան գտնվում է տնտեսության զարգացման հետարյունաբերական փուլում:

29 Նոսր բնակեցված երկրներ են.

- 1) Ավստրալիան և Կանադան
- 2) Դանիան և Բելգիան
- 3) Բանգլադեշը և ճապոնիան
- 4) Գերմանիան և Իտալիան

57 Ընտրել սխալ պատասխանը.

- 1) Աշխարհի ամենամեծ ջրհավաք ավազանն ունի Ամազոն գետը:
- 2) Աշխարհի ամենաաղի ծովը Մեռյալն է:
- 3) Մակընթացային ամենաբարձր ալիքը գրանցվել է Ֆանդի ծովածոցում
- 4) Աշխարհի ամենաերկար գետը Նեղոսն է:

58 Ընտրել ճիշտ պատասխանը.


- 1) Ներքնոլորտում մթնոլորտային ճնշումն ըստ բարձրության չի փոփոխվում:
- 2) Ներքնոլորտում ըստ բարձրության օդի ջերմաստիճանը բարձրանում է:
- 3) Լեռնային շրջաններում ըստ բարձրության մթնոլորտային տեղումների քանակը ավելանում է:
- 4) Օդի ջերմաստիճանի տատանման տարեկան լայնույթը անապատներուն փոքր է:

59 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) Գյուղատնտեսական արտադրությունն ունի գերազանցապես կետային տեղաբաշխում:
- 2) Արդյունաբերության համար բնորոշ է համատարած տեղաբաշխումը:
- 3) Տրանսպորտի համար բնորոշ է գծային տեղաբաշխումը:
- 4) Ոչ արտադրական (սպասարկման) ոլորտի ճյուղերին բնորոշ է բացառապես գծային տեղաբաշխումը:

60 Որ դիագրամում է պատկերված ԱՄՆ-ի տնտեսության ճյուղային կառուցվածքը.

- 4) 3) 2) 1)



սպասարկման ոլորտ

գյուղատնտեսություն

արդյունաբերություն

այլ ճյուղեր

## Բ ՄԱԿԱՐԴԱԿ

### 51 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) ՀՀ-ի տարածքը գտնվում է Երրորդ ժամային գոտում;
- 2) Դեկտեմբերի 22-ին Արեգակը գենիթային դիրք է գրավում հասարակածի բոլոր կետերի վրա:
- 3) Երկրի օրական պտույտի հետևանքներից է տարվա եղանակների առաջացումը:
- 4) Ամսաթվի փոփոխման գիծը համընկնում է Գրինվիչի(զրոյական) միջօրեականին:

### 52 Դունիսի 22-ին Արեգակի դիրքը հորիզոնի նկատմամբ ամենաբարձրն է.

- 1) հվ. Լ. 23<sup>0</sup> 30'
- 2) հս. Լ. 40<sup>0</sup>
- 3) հվ. Լ. 66<sup>0</sup> 30'
- 4) հս. Լ. 23<sup>0</sup> 30'

### 53 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) Մայրցամաքային տիպի Երկրակեղևի հզորությունը 5-10կմ է:
- 2) Երկրի ամենավերին և կարծր շերտն անվանում են միջնապատյան:
- 3) Երկրակեղևի հզորությունը լեռներում ավելի մեծ է, քան հարթավայրերում:
- 4) Ավազը և մարմարը հրային ապարներ են:

### 54 Ընտրել բնության բաղադրիչների միակ ճիշտ գուգորդությունը.

- 1) տայգա- պողպատական հողեր-եղևնի, սոճի
- 2) տափաստան- սևահողեր - օշինդր, ուղտափուշ
- 3) սավանա- մոխրագորշ հողեր- փետրախոտ, սիզախոտ
- 4) տունդրա-կմախքային հողեր-հաճարենի, կաղնի

### 55 Այդ լիճը գոյացել է Արևելաաֆրիկական Մեծ բեկվածքում, ունի գրաբենային (տեկտոնական) ծագում, խորությամբ աշխարհում Երկրորդն է:

- 1) Տիտիկակա
- 2) Տանգանիկա
- 3) Նյասա
- 4) Բայկալ

### 56 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) Եվրասիայի արևմտյան ափերով ձգվում է Խաղաղօվկիանոսյան գետսինկլինալը;
- 2) Մեծ Կովկասը և Ալպերը իին ու քայլաված լեռներ են
- 3) Հարավային Ամերիկայի մեծ մասը մտել է Լավրասիայի կազմի մեջ:
- 4) Երկրակեղևի ալլատֆորմային շրջաններում տիրապետում են ռելիեֆի հարք ձևերը:

### 30 Դաշնային պետություններ են.

- 1) Ուկրաինան և Ֆրանսիան
- 2) Հնդկաստանը և ճապոնիան
- 3) Ռուսաստանը և ԱՄՆ-ը
- 4) Թուրքիան և Չինաստանը

### 31 «Արտադրություն - արդյունաբերության ճյուղ» սկզբունքով կազմված գույգերից ընտրել ճիշտը.

- 1) կոշիկի արտադրություն – թեք արդյունաբերություն
- 2) նավերի արտադրություն - մետաղածուլություն
- 3) կառչուկի արտադրություն - մեքենաշինություն
- 4) նավթի արտադրություն – քիմիական արդյունաբերություն

### 32 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) Զարգացած Երկրների տնտեսության առաջատար ճյուղը անասնապահությունն է:
- 2) Զարգացած Երկրների արդյունաբերության առաջատար ճյուղը մեքենաշինությունն է:
- 3) Սոյան և բրինձը հացահատիկային մշակաբույսեր են:
- 4) Հանաշխարհային բեռնաշրջանառության մեծ մասը բաժին է ընկնում խողովակաշարային տրանսպորտին:

### 33 Ուրբանիզացման մակարդակն ամենաբարձրն է.

- 1) Չինաստանում և Բրազիլիայում
- 2) Հնդկաստանում և Ռուսաստանում
- 3) Ավստրալիայում և Մեծ Բրիտանիայում
- 4) Նիգերիայում և Իրանում

### 34 Երկաթաքարի հանույթով առաջատար Երկրներ են.

- 1) ճապոնիան և Գերմանիան
- 2) Իրանը և Եգիպտոսը
- 3) Իստալիան և Իսպանիան
- 4) Բրազիլիան և Կանադան

### 35 Հայկական բարձրավանդակի (միջնաշխարհի) լեռնագրական միավոր չէ.

- 1) Փոքր Կովկասի լեռնային համակարգը
- 2) Հայկական հրաբխային բարձրավանդակը
- 3) Ներքին Տավրոսի լեռնային համակարգը
- 4) Սիջլեռնային գոգավորությունները

### 36 «Լճային գոգավորություն - ծագում» սկզբունքով կազմված գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Վանա- խառնարանային
- 2) Ուրմիա- տեկտոնական
- 3) Փարվանա - մնացորդային
- 4) Նեմրութ-սառցադաշտային

37 ՀՀ ծալքաբեկորավոր լեռներից են.

- 1) Վայքը և Զանգեզուրը
- 2) Գեղաման և Վարդեմիսը
- 3) Զավախքը և Փամբակը
- 4) Եղնախաղը և Արագածը

38 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) ՀՀ-ում բացակայում են դաշտավայրերը:
- 2) ՀՀ-ում ձմռանը ներթափանցում են հասարակածային օդային զանգվածները:
- 3) ՀՀ տարածքը զբաղեցնում է Հայկական լեռնաշխարհի տարածքի մեծ մասը:
- 4) Լեռնաանտառային լանդշաֆտները կազմում են ՀՀ տարածքի 1/3-ը:

39 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) ՀՀ-ն բնակչության խտությամբ զիջում է բոլոր սահմանակից երկրներին:
- 2) ՀՀ-ն մշտական բնակության վերին սահմանը 2400 մ-ն է:
- 3) ՀՀ –ի ամենանոր բնակեցված մարզերն են՝ Կոտայքը և Արմավիրը:
- 4) ՀՀ –ում ազգային փոքրանասնություններից են արաբները և բուլղարները:

40 ՀՀ մետալուրգիական համալիրի ճյուղը է.

- 1) Թուժի արտադրությունը
- 2) Միկելի արտադրությունը
- 3) Մոլիբդենի արտադրությունը
- 4) Անագի արտադրությունը

41 Գեղարքունիքի մարզի բուսաբուծության առաջատար ճյուղերն են.

- 1) Բամբակենու և հացահատիկի մշակությունը
- 2) Շաքարի ճակնդեղի և ծխախոտի մշակությունը
- 3) Խաղողագործությունը և բանջարաբուծությունը
- 4) հացահատիկի և կարտոֆիլի մշակությունը

42 ՀՀ –ում երկաթուղային հանգույցներ են .

- 1) Կապանը և Զաջարանը
- 2) Արմավիրը և Արտաշատը
- 3) Սպիտակը և Ստեփանավանը
- 4) Քրազդանը և Գյումրին

43 ՀՀ դաշտավարության վերին սահմանն է.

- 1) 1600մ
- 2) 2200 մ
- 3) 2800 մ
- 4) 3400 մ

44 Եներգակիր ռեսուրսներ չեն.

- 1) Ուրանը և ածուխը
- 2) նավթն ու կավը
- 3) տուֆն ու կրաքարը
- 4) տորֆն ու բնական գազը

45 Գյուղատնտեսական հողահանդակներ չեն.

- 1) անտառները
- 2) վարելահողերը
- 3) արոտավայրերը
- 4) խոտհարքները

46 Հողերի էրոզիայի առաջացման պատճառներից է .

- 1) Դաշտապաշտման անտառաշերտերի ստեղծումը
- 2) կերային բույսերի մշակությունը
- 3) այգեգործության զարգացումը
- 4) անտառահատումները

47 Մթնոլորտի բնածին աղտոտման աղբյուր է.


- 1) մետաղաձուլական գործարանները
- 2) տրանսպորտը
- 3) հրաբուխը
- 4) ջերմաէլեկտրակայանները

48 Բնատարածքային համալիրների փոփոխությունն ըստ բարձրության կոչվում է.

- 1) Վերընթաց գոտիականություն
- 2) հորիզոնական զոնայականություն
- 3) աշխարհագրական թաղանթ
- 4) ջերմաստիճանային շրջադասություն

49 Քարտեզի վրա Աղստև գետը ո՞ր տառով է նշված.

- 1) Ա
- 2) Դ
- 3) Գ
- 4) Բ



50 Քարտեզի վրա Վայք քաղաքը ո՞ր տառով է նշված.

- 1) Ե
- 2) Է
- 3) Զ
- 4) Ը